



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 8 ՅՈՒՆԻՍ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 63

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՈՎ ՏԷՐ

Ո՛վ Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտռեն անձկագին,
հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի կը փափաքի՝
խոպան, ճաթռտած, անջուր մնացած հողի պէս:
Ուստի սրբարանդ եկայ՝ քեզ տեսնելու,
զօրութիւնդ եւ փառքդ դիտելու համար:
Որովհետեւ քու սերդ կեանքէն աւելի կ'արժէ.
ուստի շրթներս պիտի գովաբանեն քեզ,
ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեն քեզ,
եւ ձեռքերս աղօթքով դէպի քեզ բարձրացնեն:
Հոգիս խնձոյքի մէջ պիտի ըլլայ ու կշտանայ,
եւ շրթներս ցնծութեան երգերով պիտի օրհներգեն քեզ:
Երբ կը պառկիմ՝ քեզ կը յիշեն,
գիշերն ամբողջ՝ քու մասիդ կը մտածեն,
որովհետեւ օգնական եղար ինձի.
քու թելերուդ հովանիին տակ ցնծութեամբ կ'երգեն:
Ես քեզի կապուած կը մնամ,
եւ քու աջդ կը պահէ գիս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նարիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՑ ԻԸ(28) ԳԼՈՒԽ



ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՀԱԳՈՒՄՏՆԵՐ (28:1-14)

Ներկայութեան վրանին պատրաստութեան ու անոր սպասներուն պատուէրը քալէ յետոյ, Աստուած կ'անցնի մէկ այլ ուրիշ բաժնի, Ներկայութեան Վրանին պաշտօնեաներուն, այսինքն՝ քահանաներուն զգեստներուն եւ Մովսէսին պատուիրելով կ'ըսէ. «**Եղբօրդ Ահարոնին սուրբ զգեստներ շինէ պարփի ու փառքի համար: Դուն ըսէ բոլոր իմաստուն միտք ունեցողներուն, որոնք ես իմաստութեան հոգիով լեցուցի, որ Ահարոնին զգեստներ շինեն**» (2 հմր):

Այնպէս ինչպէս Ներկայութեան վրանին սպասները սուրբ սպասներ են, նոյնպէս ալ Ահարոնին զգեստները սուրբ զգեստներ են, որ կը նշանակէ մաքուր, զարուած, զբուած, եւ յապուկ նպարակի համար յարկացուած՝ Աստուծոյ: Շինողները իմաստուն մարդիկ, որոնք լեցուն են Աստուծոյ իմաստութեան հոգիով, այսինքն՝ աստուածավախ մարդիկ:

Զգեստի բաժինները.

Եփուր, Լանջապանակ, Պարմուճան, Բարեգոյր, Նկարագարդ շապիկ, Խոյր, Գօփի:

Նախ կը սկսի եփուրով: Եփուրը հիւսուած պէտք է ըլլայ 4 քեսակի գոյներով եւ ոսկեթել: Կը նշանակէ որոշ փայլք ունեցող: Եփուրը անթել կարճ բաճկոն մըն է, որ կը հագնի բարեգոյրին վրայէն: Այս եփուրին վրայ պիտի կրէ «**Երկու եղնգաքարեր որոնց վրայ Իսրայէլի որդիներուն անունները փորագրես: Կնիք փորագրելու պէս փորագրէ: Երկու քարերը եփուրին ուսերուն վրայ դիր, որպէսզի Իսրայէլի որդիներուն յիշատակի քարեր ըլլան: Ահարոն անոնց անունները յիշատակի համար իր երկու ուսերուն վրայ պիտի կրէ Տիրոջ առջեւ**» (12 հմր): Քահանան Աստուծոյ եւ մարդոց միջեւ միջնորդն է եւ ամէն անգամ որ կը ներկայանայ Աստուծոյ, իր ժողովուրդը պիտի ներկայացնէ, եւ իր ուսերուն վրայ ունենալը կը նշանակէ պարասխանապարտութիւնը ունի այդ ժողովուրդին հոգեւոր, կրօնական ու ազգային: Այսինքն Աստուծոյ դիմաց ինքն է հաշուետուն, պարասխանապարտ:

ԼԱՆՋԱՊԱՆԱԿ (28:15-30)

Զգեստի յաջորդ բաժինը Դարասպանին լանջապանակն է: Այս լանջապանակին վրայ 12 թանկագին քարեր ըլլան իւրաքանչիւրը խորհրդանշելով Իսրայէլի 12 ցեղերը: Որպէսզի «**երբ Ահարոն Սրբարան մտնէ, Իսրայէլի որդիներուն անունները Տիրոջ առջեւ յիշատակի համար՝ միշտ իր սրտին վրայ եղած դարասպանի լանջապանակին վրայ պէտք է կրէ**» (29 հմր): Եթէ եփուրի պարագային ուսերուն վրայ պիտի կրէ, ապա լանջապանակի պարագային սրտին վրայ:

Իսկ լանջապանակին մէջ «**Ուրիմը ու Թումիմը դիր**» (30 հմր): Այսինքն՝ լոյսեր, կամ յայրնութիւն, կարարելութիւն, ճաշմարտութիւն: Այս մասին արքայապարտութիւն կը գնենք Ա Թագ 28 գլխու մէջ, երբ Սաուղ կ'ուզէ գիտնալ պատերազմի ելքի մասին, կ'ակնկալէ որ Աստուած իրեն նշաններ ցոյց քայ երեք միջոցներով՝ երագներով, մարգարէներով կամ Ուրիմով: Կարծէք Ուրիմը կը ծառայէ Աստուծոյ կամքը իմանալու: Ուրեմն եթէ լանջապանակին վրայ 12 քարեր կան Իսրայէլի 12 ցեղերը խորհրդանշող, ապա Ուրիմին ու Թումիմին ըլլալ ցոյց կու քայ թէ անոնք պէտք է առաջնորդուին Աստուծոյ կամքին համաձայն:

Եւ քանի մը անգամ նոյն պատուէրը. «**Ահարոնին սրտին վրայ ըլլան, Ահարոն Տիրոջ առջեւ միշտ իր սրտին պէտք է կրէ Իսրայէլի որդիներուն դարասպանը**» (30 հմր):

ՈՒՐԻՇ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱԳՈՒՄՏՆԵՐ (28:31-43)

Պարմուճան կամ բարեգոյր: Ասիկա եփուրէն քիչ մը աւելի երկար բաճկոն մըն է, անթել եփուրի քակէն կը հագցուի: Միակտոր, վիզի մասը բաց: Պարմուճանը եւս թելերով հիւսուած եւ անոր վարի բաժինէն նուրեր (հաւարիք նիւթեան խորհրդանիշ, այնպէս ինչպէս նոան մէջ հարիկները կան բայց միացած են, նոյնպէս ալ հաւարքի պարագային) եւ ոսկի զանգակներ պէտք է կախուած ըլլային, որոնց ձայնը զգաստ, արթուն պահելու համար քահանայապետը, որովհետեւ քարին մէկ անգամ ան իրաւունք ունէր Սրբութիւն Սրբոց մտնելու եւ մեծ վախ կը բռնէր Աստուծոյ ներկայանալու, այդ զանգակները կը յիշեցնէին իր պաշտօնը, որպէսզի ինքզինք բռնէ եւ հանկարծամահ չըլլայ վախի

պարճառով. «Տիրոջ սրբարանը մտած ու ելած արեն անոր ձայնը պիտի լսուի, որպէսզի չմեռնի» (35 հմր):

Իսկ գալով խոյրին անոր վրայ ոսկիէ թիթեղ մը վրայ փորագրուած «ՄՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ», «Ահարոնին ճակատին վրայ թող ըլլայ, որպէսզի Իսրայէլի որդիներուն նուիրած բոլոր սուրբ ընծաներուն ռեւէ անօրէնութիւն Ահարոնը կրէ» (38 հմր): Գիտենք, թէ որքան մարդ մաքուր ըլլայ, սակայն, անոր նուիրածը մաքուր չի կրնար ըլլալ: Նաեւ մեր ընծայելու մօտեցումը որքան ալ բարին ըլլայ, սակայն, միշտ մեր մտքերը, գիտակցաբար թէ անգիտակցաբար, խառն են մեղաւոր մտադրութիւններով, որոնք անկատար կը դարձնեն այդ գոհերուն ընծայումը, եւ այդ բոլորը քահանան ինքն է որ իր վրայ պիտի կրէ եւ անոնց քաւութիւն ընէ, որովհետեւ ինք ամբողջութեամբ նուիրուած է Աստուծոյ, եւ Աստուած անոր սիրոյն մնայուն կերպով կը քաւէ ժողովուրդին մեղքերը:

Գօտիին դերը, որպէսզի պինդ պահէ զգեստի մասերը մարմնին: Որուն համար Պօղոս Առաքեալ մէկ այլ ուրիշ փարբերակով մը պիտի ըսէ. «Ճշմարտութեան գօտիով ամրապնդեցէք ձեր մէջքը» (Եփես 6:14):

Իսկ մէկ այլ ուրիշ պատուէր մը. «Զանոնք օձէ եւ օրհնէ ու սրբէ, որպէսզի ինծի քահանայութիւն ընեն» (41 հմր): Օձէ կը նշանակէ Աստուծոյ Հոգիին պարգեւները փայլ: Սրբել կը նշանակէ աշխարհէն անջարել եւ Աստուծոյ ընծայել: Իսկ օրհնելը օձելուն եւ սրբելու վրայ կրնայ աւելնալ որպէս պաշտօնին նուիրագործումը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ օրհնութիւնը փրուած քահանային որ միջնորդի դեր ունի կատարելիք մարդոց աղօթքները Աստուծոյ ներկայացնելու եւ Աստուծոյ պարասխանն ու օրհնութիւնը փոխանցելու ժողովուրդին:

